# ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ ԵՎ ԱՐՏԱՇԵՍ ՄԻՆԱՍՅԱՆԸ՝ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐ

Արաբական Միացյալ էմիրությունների Դուբայ քաղաքում ավարտին է մոտենում միջազգային ավանդական մրցաշարը, որի 100 մասնակիցները 3-րդ անգամ վիճարկում են «Շեյխի գավաթը»: Մրցաշարի կազմն այս անգամ բավականին ուժեղ է: Դուբայում հանդես եկող մեր 3 ուժեղագույն գրոսմայստերների՝ Արտաշես Մինասյանի, Աշոտ Անաստասյանի եւ Կարեն Ասրյանի մրցակիցների թվում կան այնպիսի հանրաճանաչ շախմատիստներ, ինչպիսիք են Ա. Խառլովը, Բ. Ֆիլիպովը, Ա. Մոտիլյովը, Ա. Շահրիյազդանովը, Մ. Կոբալիան (բոլորն էլ՝ Ռուսաստան), Յ. Էլվեստը (Էստոնիա), Ե. Վլադիմիրովը (Ղազախստան), Զ. Ստուրուան (Վրաստան), Ա. Ալեքսանդրովը, Ա. Ֆյոդորովը (երկուսն էլ՝ Բելառուս) եւ այլք:

Մեր շախմատիստները բավականին հաջող մեկնարկեցին: 2 տուրից հետո նրանք վաստակել էին 2-ական միավոր: Հաջորդ տուրից հետո 3-ական միավորով մրցաշարային աղյուսակը սկսեցին գլխավորել Կարեն Ասրյանն ու Աշոտ Անաստասյանը, որոնք 4-րդ տուրում իրար հետ ոչ-ոքի խաղալուց հետո շարունակում էին պահպանել առաջատարի իրենց դիրքերը: Ցավոք,




**Դուբայի մրցաշարում խաղում են Ասրյանը եւ Սերմեկը:**

հաջորդ 2 պարտիաներում Անաստասյանն անհաջողության մատնվեց եւ զգալիորեն վատթարացրեց իր մրցաշարային վիճակը: 7-րդ տուրից առաջ առջեւից էին ընթանում Կարեն Ասրյանն ու էստոնացի գրոսմայստեր Յան Էլվեստը (5-ական միավոր), որոնցից կես քայլ հեռավորության վրա գտնվող հոծ խմբում էր նաեւ Արտաշես Մինասյանը: Այն բանից հետո, երբ հերթական տուրում Ասրյանն ու Էլվեստը ոչ-ոքի համաձայնեցին 10-րդ քայլին, միավորներով նրանց հավասարվեցին Եվգենի Վլադիմիրովը (Ղազախստան) եւ, ի մեծ ուրախություն մեր շախմատասերների, Արտաշես Մինասյանը, որը սեւերով պարտության մատնեց գրոսմայստեր Պավասովիչին: Այսպիսով, մրցաշարի ավարտից 2 տուր առաջ 5,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Ասրյանը, Մինասյանը, Էլվեստը եւ Վլադիմիրովը: Անշուշտ, ուրախացնում է հայ շախմատիստների վստահ ելույթը: Նշենք, որ երեկ ապրիլի 24-ին, լրացավ Կարեն Ասրյանի ծննդյան 21-րդ տարեդարձը, որի առթիվ ջերմորեն շնորհավորում ենք տաղանդավոր շախմատիստին: Հենց երեկ երեկոյան էլ Դուբայում խաղացվում էին նախավերջին տուրի պարտիաները:

**ԱՍՐՅԱՆ - ՕԴԵԵՎ**

**1. e4 c5 2. Ձf3 d6 3. d4 cd 4. Ձ:d4 Ձf6 5. Ձc3 a6 6. Փe2 Ձbd7 7. O-O Ձc5 8. Փf3 e6 9. a4 Փe7 10. Փe3 O-O 11. a5 Թc7 12. Նe1 Նb8 13. Ձb3 e5 14. Ձc1 b5 15. ab Ն:b6 16. Ձd3 Նb8 17. Ձ:c5 dc 18. Թc1 Նb4 19. Փe2 c4 20. Նa2 h6 21. f3 Փc5 22. Ձd1 Նd8 23. Փ:c5 Թ:c5+ 24. Թe3 Թc7 25. Ձc3 Թb8 26. Նd1 Փe6 27. Ն:d8+ Թ:d8 28. Աf2 Թb6 29. Ձd1 Թb7**



30. Թc3 Ձd7 31. Ձe3 a5 32. Փ:c4 Փ:c4 33. Ձ:c4 a4 34. Ձe3 Ձf6 35. Թ:e5 Թb6 36. Աe2 Թa6+ 37. Աd2 Թb6 38. Նa3 Ն:b2 39. Ն:a4 Աh7 40. Թd4 Թb8 41. e5, սեւերը հանձնվեցին: